



Պատասխանատու
Յովհաննէս Փիլիպեան

ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՈՆԻՈՅ

Նամակըն ուղղելի են
առ. Ղ. Գ. Պալապարեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԲԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՈՆԻՈՅ ՇԱՐԱԹ 31 ՄԱՐՏ 1879

ԹԻՒ 1115

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արեւելեան Բուսմանիոյ երկիրը ուսումնական գործի մէջ պարտաւորեալ պայմանաւորմամբ, որ է 2/14 Մայիսի, որչափ կրթութեան, այնչափ անաւել գումարով իւրենեք կը ծանրանան։ Ըստ դաշնադրին Բերլինու յիշեալ երկիրը Սուլթանին քաղաքական իշխանութեան տակ պիտի մնայր, զորտոնեայ իշխան մի միայն ունենալով։ Զորքը աղբայրին պիտի լինէր, և Թուրքական զորքը այն ժամանակ միայն իրաւունք պիտի ունենար ներս մտնելոյ, երբ տարածական խռովութիւններ ծագելոյ լինէին։

Ապագայ ժողովոյ կնքած խաղաղութեան դաշնադրոյ մէջ, որ անդրադառնալով պիտի մնային և կէտ առ կէտ պիտի գործադրուէին, սոյն Արեւելեան Բուսմանիոյ խնդրոյն պատճառաւ պիտի խրամանային։ Ռուսաց զորքերը չեն լինելու մեծ տէրութեանց կողմէ պիտի գրաւուի զինուորապետ։ և այս Կորդոնի արդէն մեծ տէրութիւնը իրենց հաւանութիւնը տուած են։ Հիւսիսային կողմէ Ռուսը, հարաւէն Օսմանցին, իսկ երկրին միջնակայը Անգլիան, Աւստրիան և Իտալիան պիտի գրաւեն, մինչև որ երկիրը խաղաղ խաղաղի և խռովութեան երկիւղ չմնայ։ Բայց այս փոխոյն արդեօք զօրաւոր է դէմ դնելոյ Բուսմանիոյ յանդուգն վարմանը և միւսուստիւթեան գործարածին Թուրքիոյ դէմ։ Շատ հասանական լինարձուի և Կորդոնի քաղաքացիական աշխարհէ հակառակ Բերլինու մեղադրութեան պատճառով ցած խաղաղութեան, կրկին անգամ առաջադրուած պիտի լինին մարդկային կոտորածից և արիւնահեղութեան։ որովհետեւ մեծ տէրութեանց կողմէ զրկուելիք գործերը չյուսացուիին որ 15 հազարէն աւելի լինին, որ բաւական չէ տարածութիւն մի հոսելոյ։

Պոլսիցէն Բուսմանիոյ փոխարէն գրաւած նաւակ մի կարեւոր խորհրդածութիւններ կը պատահուէին Պալատներէն թերակողոյն նկատմամբ։ Սուրբ է որ, կ'ըսէ, Թուրքերը սաստիկ ընդդիմութեան պիտի հանդիպին երբ Պալատին կիրքերը գրաւելու լինեն։ Երեք Ռուս զորապետներ լրար ցեղէն, կ'ըսէ յիշեալ նմանիւր, հրաման ինքրած են Ռուսիոյ ծառայութիւնը թողուլ և ինքնաբերական զորաբանակաց հրամանատարութիւնը ձեռք առնուլ։ սոսնց գիտնալով իւրեն ոչ թէ Բուլղարիոյ ծառայել է, սոյն հարկ եղած խաւանակի ի նպատակ Բուսմանիոյ թափելու իրենց զինուորական անդամներին։ և արդէն 24,000 զօրք կը հաշուի, զոր կարող է Բուլղարիան այն նպատակին համար ծառայեցնել, և Ռուսիան ևս իւր կողմէն 14,000 զինուորական զորքի ունի։ Եթէ սոսնց են սոյն տեղեկութիւնները, թէ Բուսմանիան և թէ Բուլղարիան իրարմիջ իրարմիջ և իրենց համար Զէրպայէններ չպիտի պակսին։

Ռուսիոյ տէրութիւնը, կը հարցանեն սոսնց, ինչ չափեցաւ սոյն վերջին պատերազմէն, գրեթէ մաս մի երկիր Հայաստանի մէջ, և Բուսմանիան Բուսմանիայի մէջ և ստանալիք գումար մի պատերազմի տուգանաց փոխարէն։ ահա չափաւոր։ Ռուսիան այդչափ իւր գործը չգիտցող չէ, առանց բարակ հաշիւներու ճամբայ չեներ։ բաւական է որ նա իւր աւանդական նպատակին զայն մի աւելի մօտենայ, ահա այն է իւր շահը։ Եւ սոյն միջոցիս անգամ որ պատերազմը վերջանած է, նա խաղաղութեան շաղկիւն մէջ իսկ չաւանդու կ'աշխատի։ Ի՞նչ կը շահակէ Շուվարֆի իւր դեպքական պաշտօնը թողլով անգաղար ի Բեդերսուրդ և անտի գործեալ ի

Լոստոն երթեալ, առանց նպատակի են միթէ։ Ոչ բնաւ։ Կորդոնի իշխանին շրջաբերական յաջողութիւնը դիւրացնելոյ համար կ'ընայ ընծայուիլ նորա երթեալը։ Երջաբերականին իմաստն է Բուսմանիոյ համադրային յանձնաժողովոյ իշխանութիւնը տարի մի ևս երկարացել և նորա սահմանադրական օրինաց հաստատութեան և գանձային վիճակի կարգադրութեան համար տրուած իշխանութեան վերայ՝ աւելցնել նաև լիազօր կարողութիւն երկրին տեսչութեանը մասին։ Ընդհանուր կառավարչին անշուշտ երկարել մինչև որ յանձնաժողովը իւր գործերն վերջացնէ։ վերջապէս արդի յանձնաժողովը իւրեն օգնական ուրիշ խառն յանձնաժողով մի հաստատել։ և այս երկրորդին մէջ ինչպէս յայտնի է, Գաղղիան և Գերմանիան չեն ընդունած միջամտել, այսինքն իրենց կողմէ ևս զօրք չկրկնել Բուսմանիոյ կեդրոնական երկիրը գրաւելոյ համար։

Երբ մտածելոյ լինիմք թէ գանձային վիճակը աչքէ անցնելու և կարգադրելու համար Պ. Սմիթի պաշտօնը որքան դժուարութեանց և վտանգներու հանդիպեցաւ ժողովրդին կողմէ, չեմք կարծիք որ անկէ աւելի յանձնութիւնը գանձ տեսչական պաշտօնը։ Սոյն նոր տնօրէնութիւնները, որ ըստ մասին ընդունուած են մեծ տէրութեանց կողմէ, մեր վերը ասածնաւ կ'ընդհատուեն, այն է խաղաղութեան գաղանց ցանկին խրամատիւր։ Եթէ այս յաջողի, կրնայ աղաղակել մէջ ուրիշ խրամատներ ևս բացուիլ, բաւական է որ Ռուսն ու Անգլիան իրենց մէջ համաձայնին և Աւստրիոյ վրաս մի չպատահի անկէ։ Գաղղիան և Գերմանիան ալ կրնան առայժմ չեղծքանալ ըստ պահանջման իրենց փոխադարձ շահերը և քաղաքականութեան։ Իտալիա ևս մինակ մնալով ձայնը կը բաշէ։ Իրմիայ միայն Թուրքիան, նա ալ իւր ճակատագրին տակով բոլոր եղած ու ըլլալիք դէպքերը, կը համակերպի Աստուծոյ կամոյցը։

Բուսմանիոյ խնդրէն յետոյ կուգայ հելլենական խնդիրը, որոյ չուժմանը համար, ինչպէս յայտնի է, ստորագրեալ տէրութեանց միջամտութիւնը պաշտօնապէս խնդրուեցաւ։ Գաղղիան ի սկզբանէ ի վեր ի նպատակ չեղեցաւ կուգէ որ խնդիրը լուծուի, սոյն մտօք շրջաբերական մի ուղղած է տէրութեանց, քայց ճիշտ չգիտցուի թէ լուծման համար ինչ եղանակ կ'առաջարկէ։ Գերմանացիներ թագաւորը Եպիւրոպացոց պատգամաւորութեան մատուցած իշխանութեան պատգամաւորութեան մէջ ինչ որ Գերմանացիներ կը վերաբերին ամբողջապէս սխալ գործադրուի։ Սոյն հեռագրէն մի օր յետոյ քաջաւած ուրիշ հեռագիր մի (4 Ապրիլ) կը ժամանայ թէ լիւրա Պիլզնիստիլա լորաբերու խորհրդարանին մէջ յոյս յայտնեց, իւր թէ Գերմանացի չլինի պահանջէ՝ քայց եթէ ինչ որ արդար է, և թէ Թուրքիան պիտի չնորհէ ինչ որ կարելի է։ Լորտին խորհրդաւոր արտայայտութեան մէջ ցոյց տուած յոյսը չհամաձայնի Գերմանացի թագաւորի ակնկալութեան հետ։ Միւսով քանիւ յոյս կայ որ այս անգամ յանձնաժողովները կրկին գումարուելու ի իրենց պէտք, ինչ որ բարեկամաբար կը վերջանայ, և քաղաքական հորիզոնին երեւոյն սեւ մայ մի կը պակսի առանց փոխորդի գառնալու։ Գերմանական խորհրդարանին մէջ ամենէն կարեւոր խնդիրներէն մին է նաև Ալլաւ—Լորէնի ինքնօրինութիւն տրուելու խնդիրը։ Սոյն հարցն առաջին անգամ ընտրէ Սալթիքի երեսփոխան Պ. Շիկանս, որ խորհրդարանի մէջ առաջարկած է երկար քանակութեամբ մի,

յորո՞ւմ ցոյց կուտայ որ, եթէ ինքնօրինութիւն տրուելոյ լինի, սրգելները ու պիտի ըլլայ որ, Ալլաւ—Լորէնի սերն առ մայր հայրենիս աւելի սաստիկ պիտի լինի, և պիտի թողարարի յիշեալ երկրին որ իւր կամայով ծառայէ դաղդիական և գերմանական քաղաքակրթութեանց մէջտեղ և հետեւապէս՝ Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ։

Սոյն առաջարկութեան Պիլզնիստիլա իշխան պատասխան տուած է, թէ սխալ կ'ընդունի։ Շնչկանսի առաջարկութիւնը, քայց այն ժամանակ Ալլաւի վերայ 1870 թուականին մէջ ունեցած երկտասնորդական սէրը չպիտի կարենար ունենալ և նոյն յոյսերն չպիտի կարենար իւր սրտին մէջ տանել։ Յետոյ յայտնեց իւր միտքը, թէ կ'ուզէ մանաւանդ Ալլաւը Լորէնէն դատել, և Ալլաւի կառավարութիւնը Բերլինէն ի Սլաւոնոք փոխադրել, և նորա կառավարութիւնն ոչ թէ անկախ իշխանի, այլ կայսերական տեղապահի կամ այնպիսի կառավարչի յանձնել, որ վեհապետական մի քանի արտօնութիւններն ընենայ, և իրեն օգնական երեք կամ չորս պաշտօնական տեսուչներ։ և սոյն կառավարութեան յարաբերութիւններն տէրութեան խորհրդակցին մի ձեռք կարգադրուին, որ եղած գաղանկան գործերը կ'աշխարհ ստորագրութեան ենթարկէ, անոնց ինչութեան և կարեւորութեան մասին տեղեկութիւններ տալէն յետոյ։ Եւ անանին խորհրդարան մի ևս ունենայ ընտրութեան եղանակին վերայ դաշնակցական խորհրդարանին մէջ առաջարկութիւններ ըլլալէն յետոյ։ Պիլզնիստիլա իշխանն որքան որ սոյն քաղաքականներն տակ ևս կը դիտէ սոյն խնդիրը։ վասնորոյ դեռ խիստ կանխահիմք կ'ընէ մեղ Պ. Շնչկանսի առաջարկեալ խնդրոյն յաջողութիւնը։ Բայց սա ևս չմոռնալ ըսել թէ, աւելի գիտնալէ Ալլաւից ինքնօրինութիւն ստանալու քան թէ Հայաստանցոց հարստահարութեան աղաւթը։

Բարեբաղնի Գիլէն հասած լուրերուն նայելով, դեռ Զուրուհիւրուն երկիրը կը տրիք Անգլիացոց վերայ։ նոքա մեծ խուճիկեր, վայրենեաց ջոկերներ կը համախմբեն Անգլիացոց դէմ յարձակելոյ, որոնք եթէ չեն հաւատարմի վերջիններուն զինուորական քաջութեամբ, սակայն կը գերազանցեն զանոնք իրենց բարբարոսական անդիմութեամբը։ Անցեալ աւուր հեռագիրը կը ժամանայ անգլիացի զօրաց ի Գալ հասնիլ և դէպի բանակակերտուն յառաջելը։

Իսկ Աֆղանիստանէն հասած լուրերը երբեք իրարու չեն համաձայնի։ Շիր Ալի մահուանէն յետոյ, Անգլիացին մեր գործը նորա հետ էր։ Իւր որդւոյն Եագուպ խանին հետ կուլ չունիմք ասելով՝ գործը հաշտութեամբ վերջացնել ճանաց միշտ ի նպատակ իւր շահուն, այսուամենայնիւ դեռ սոսնց տեղեկութիւն չկայ նոր Գալ հակալին ընթացքին վերայ, որոյ համար կըսուի թէ թշնամութիւնները ձեռք առած է և կ'ընդգլխանայ Անգլիացոց։ Եւ այս հաւանական իւր խոստմանց ձեռք քաշել չուղեր նոյն սահմաններէն, և քանի որ ըստ Իսկիլի լրագրին, Գիլզման գորապետը ոչ թէ կը հեռանայ անկէ, այլ աւելի կը հաստատուի իւր գործը զօրացնելով, հետեւապէս Եագուպ խան չլիտի զինանի հաշտութիւն կնքելու յոգեւոր Անգլիացոց։

Եգիպտական խնդրոյն գալով նոր հեռագիր մի կը ժամանայ թէ անգլիացի և դաղղիացի գլխաւոր պաշտօնեայները հրաժարեցնելով Շէրիֆ փաշային յանձնելու և խաղաղ նոր պաշտօնեաներ հաստատել միայն տեղացիներէն։

համեմատելով, յորում արժանիքը կը գտնուի :
«Բայց գլխաւոր գործն էր գիտնալ թէ այն միջոցներուն մէջ որոնք են որ աւելի դիւրաւ կրնան ի գործ դրուիլ իսլամական երկիրներուն մէջ, որ առանց զանց ընելոյ Ղուրանի օրէնքը՝ կարող լինէին զանոնք արդի վիճակէն հանել և իրենց յառաջացումն ապահովել :

«Երբ թուրքներն գանձային վիճակը գէշացաւ, հարկ եղաւ համազգային յանձնաժողով մի կազմել, որոյ նախագահ կարգեցաւ Խայրէտտին փաշայ : Ետտ չանցաւ՝ երբ իւր աներն ինկաւ, այն է երեսելին Մուստաֆա խաչմատարը (1873), Պէյքը զինքը առաջին պաշտօնեայ կարգեց : այն ժամանակն էր որ ամեն ջանք ի գործ դրաւ որ իւր գործերն համաձայնին իւր գրքին մէջ յայտնած գաղափարներուն և կարծեաց : Եւ որովհետեւ ուղղութեամբ կը վարուէր, ոչ թէ առաքինութեան համար քիչ իւր պարտաւորութիւն, որ մինչև այն ժամանակ հաղուադիւտ բան էր տեսնել թուրքներու պետական մարդոց մօտ, ուստի շուտով թէ տեղացիք և թէ Եւրոպացիք ճանչցին իրենց շնորհապարտութիւնը : Սոյն հանգամանքը Պէյքին աչքին զարկաւ, իմացաւ Խայրէտտին փաշայ և իւր հրաժարականը տուաւ (20 Յուլիս 1877), և քաշուեցաւ ի Գաղղիա, իւր սիրած երկիրը : Նորա հեռանալէն անմիջապէս յետոյ թուրքներն կառավարութիւնն ինկաւ իւր առջի թմբուրութեան և ապակառութեան մէջ :

«Խայրէտտին փաշայ գարձաւ երկին ի թուրքաւոր, ուր կ'ապրէր հանգիստ ու քաշուած՝ պարզ անհատի նման, երբ հեռագրական հրովարտական ի կ'Պոլսոյ կոչուեցաւ : Տէրութեան մէկ շաբաթէն և կըստաւ իրեն ի Ծարտանել, ուր տարաւ զինքը Սուլթանին մօտ յորմէ քաղցր և շնորհալի բնութեան թուրքի գտաւ թուրքիոյ բարեկարգութեանց գրքին հեղինակը :

«Ի նկատի առնելով տասը տարին յորմէ հետէ հրատարակուած է յիշեալ գիրքը, անոնք անգամ որ ամեն խնդրոց մասին համաձայն չեն հեղինակին հետ, գոնէ պիտի համաձայնին ըսելով թէ, նա իւր պետական ճշմարիտ մարդը զանց չէ բրած ցուցնել բոլոր իսլամ կառավարութեանց տկար կողմերն և և սպառնացող վտանգներն, և թէ գալիք աղէտքներն նախատեսելով ի ժամանակին իւր գոռում գոչումովը խնայեցած չլինի իւր կրօնակցաց :

«Անոնք որ կը ճանչնան թուրքիոյ կայսերութիւնը եւրոպիոյ մէջ գոյութիւնն ունենալոյ իրաւունքը, և հետեւապէս նորա պահպանութեան կը փափաքին, պիտի ճանչնան Խայրէտտին փաշային բոլոր այն յատկական ձիրքերն, որոնք կարեւոր են վերջին դէպքերով անգթաբար հարուածեալ պետութիւն մի վերականգնելու :

«Բայց եթէ ընդհակառակը, ամենեան Օտէրութիւնը եւրոպիոյ մէջ իւր պաշտօնը աւարտած լինելով, դատաւարտուած է իւր բաղդէն բոլորովին կործանելու, գոնէ մի իսլամի կարապին ձայնը պէտք է լսուի անկեղծ ու կաթողին սիրով զգածեալ իւր խեղճ հայրենեաց վերայ, և այսու հանգերձ նա ցոյց պէտք է տայ լաւագոյն վիճակի արժանաւոր լինելու : Եւ թ չնամին անգամ չպիտի զլանայ իւր յարգանքը և սքանչացումը ցոյց տալոյ ճշմարիտ հայրենասիրութեւ :

ՄՇԱԿԻ ԱՉԱՍԱՆՈՍԱԻԹԻԻՆԸ

ՄՇԱԿԻՆ փոխառած հետագայ յորում ժը մէջ կը բերեմք այստեղ իւր օրինակ աղատախօսութեան, զոր նախանձելի է մեղտեսնել թուրքիոյ նման միապետական օրինօք կառավարեալ երկրին մէջ : Նախանձելի կ'ըսեմք, ըստ որում մեք Չմիւսնիոյ պէս, գէթ աղբային խնդրոց նկատմամբ, աղատ համարեալ քաղաքիս և լուսաւորեալ ժամանակիս մէջ չունիմք նոյն ազատութիւնը մեր մասնաւոր կարծիքներն և գաղափարներն ի հրապարակ հանել հասարակաց դատողութեան ենթարկելով, և աղբային կամ մասնաւոր խմբակներու մոլութիւնները անուղղակի կերպիւ դատարկեալ, և այսպէս գոնէ իւր խմբագրի պարտք աղբին բարոյական շահուցը նպաստել :

«Թիֆլիսցիները տեսնելով, որ «Մշակը» յարձակուում է նրանց վրայ, ասում են՝ «Ինչ իրաւունքով «Մշակը» այդքան յանդուգն կերպով «վերաբերվում է դէպի թիֆլիսցիները . . . »

Այս հարցին ես ուրիշ մի հարց կառաջարկեմ : «Ինչ իրաւունքով թիֆլիսցիները այդքան յանդուգն և անամօթ կերպով են վերաբերվել դէպի «Մշակը» նրա գոյութեան եօթ տարւայ ընթացքում . . . »

Երեւակայեցէք ձեզ ընթերցող հետեւեալը : Ձեր բարեկամի բնակարանի հարեան տանը հոգեհէյայտնվել, Հէնց որ դուք այդ իմացաք, իսկոյն շտապում էք ձեր բարեկամի բնակարանը, զարթեցնում էք նրան քնած տեղից և ասում էք : «Շուտով վեր կաց, դու անհոգ, տունդ այս րօպէիս այրվելու է» : հոգեհէյ մօտ է, հաւաքիր փողերդ, թանգաքին իրեղեններդ գրքերդ շորերդ, մի խօսքով ամենամահաբաժնեղ և դուրս արի տանից, փախիր Եւստարա, վտանգը մեծ է . . . Բայց սորանից եթէ բանն էլ չես ուզում վերցնել, գոնէ ինքդ վեր կաց արի, գնանք փրկենք մեր հարեանին, որ ինքն չէ կարող դուրս գալ տանից, չէ կարող ման գալ, որ մեր օգնութեան է կարօտ, որովհետեւ անդամալոյծ է, հիւանդ է . . .

— Գնա՛, կորիւր, ասում է ձեզ ձեր բարեկամը, փոխանակ շնորհակալ լինելու ձեզանից, որ զարթեցրիք նրան :

— Ձեմ լսում, հարեանիդ (դուցի) տունը այրվում է, քեզ եմ ասում . . . կրկնում է ք դուք :

— Յիմար, դու ինչ իրաւունքով խանգարեցիր իմ հանգիստ քունը, վերջապէս բարկացած կանչում է ձեր բարեկամը, փոխանակ ձեզ շնորհակալ լինելու և ձեր խորհրդին հետեւելու :

Դուք այնու ամենայնիւ չէք վճատվում, չէք վերաւորվում ձեր բարեկամի կօպիտ, անտեղի խօսքերից, նրա հայհոյանքներից և անպատճառ կամենում էք ազատել նրան սպառնող վտանգից :

Թանկարժէք ձեր բարեկամը վեր է թռչում իր անկողնից, ոկտում է ձեզ աւելի սառակ հայհոյել, գուցէ ձեզ ապտակներ տալ, ամենամահաբաժնեղ խօսքեր ասել, ի նշան երախտագիտութեան, յետոյ սկսում է թռչկոտել, (ցատկոտել) սենեակում պար գալ, Օֆէնբախի երգերը երգել, կանկան պար գալ, գոթի (խեղդ) պէս ծիծաղել, նոյն իսկ ձեզ ծաղրել, վերջապէս յօգնած կրկին պառկում է և նորից ընկնում է քաղցր և անփողով ընի մէջ . . .

Դուք անիծելով ձեր անխելք, ապերախտ և թեթեամիտ բարեկամին, դուրս էք գալիս նրա բնակարանից ակամայ արտասանելով այդ խօսքերը, «Ուրեմն, ինչպէս ուզում ես, խորովիր կրակի մէջ . . . Գայլի գլխին աւետարան կարդալը խենդութիւն է . . . »

Եւ դուք շտապում էք գոնէ ձեր անձը ազատելու հոգեհէյ վտանգից, և վերջին փորձ էք փորձում ձեր միւս բարեկամին՝ հիւանդին, անդամալոյծին ձեր ոյծերով մէնակ իր բնակարանից դուրս բերելու . . .

Եթէ տարի շարունակ «Մշակը» կրկնում էր թիֆլիսցի հային, ասեմք ընդդէմ, քեզ պատել է քո ապիտութեան, քո յիմարութեան, քո անբարոյականութեան հոգեհէյ, վեր կաց, գընանք, դու առողջ ես, եթէ ուզենաս կարող ես ման գալ, մենք դարձեալ աւելի լաւ դուրս թեան մէջն ենք, քան թէ մեր հարեանը, մեր թիւրքաբնակ աղգակիցը, որ ինքն իրան վեր կենալ չէ կարող, որովհետեւ հիւանդ, տկար անդամալոյծ է, օգնենք նրան, մեկնենք նրան օգնութեան ձեռքը . . .

Իսկ մինչև որ «Մշակը» այդպէս խօսում էր, թիֆլիսցի հայը թռչկոտում էր, կանկան էր պար գալիս, յետոյ նոյն իսկ «Մշակին», որ նրան խելքի էր ուղում բերել, ապտակներ էր տալիս, ձեռքով, ոտքով էր խփում, ծաղրում էր նրան, ամենամահաբաժնեղ փողոցային հայհոյանքներ էր թափում նրա գլխին . . .

«Մշակի» ձայնը լսելի եղաւ Ալէքսանդրապօլում, Դաւիթսում, Կ. Պոլսում, Բագուի մէջ, Մոսկւայում, Ս. Պետերբուրգի մէջ, Աստրախանում, Յարիցինում, Պետրօվսկում, Երեւանում,

Ադուրխում, Փարիզում, Բերլինում : Իսկ թիֆլիսցիներն, նրա հարեանը, ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում նրա վրա, իբր թէ նա չկայ՝ աշխարհիս երեսին, իսկ եթէ յիշում էր նրան, — հայհոյում էր նրան ամենամահաբաժնեղ ամօթալի բառերով . . .

Դեռ նորերում մի թիֆլիսցի գարդակազըլուի բարձր ուսում ստացած հայը, որ միւսնոյն ժամանակ կամենում է գեր խաղալ մեր քաղաքում, որպէս վարձատրութիւն «Մշակի» եօթ տարւայ գործունէութեան համար, բարեհաճեց մի հասարակութեան մէջ, ընթերիքի ժամանակ անուններ «Մշակը» անմաքրութեան խողովակ, կլօտի . . .

Ահա թիֆլիսցին, ահա նրա կատարելատիպը, ահա թիֆլիսցի բարձր ուսում ստացածը . . .

Իմ խոր համոզմունքս է, որ «Մշակի» խմբագրի գործունէութիւնը սպարդիւն է, մանաւանդ թիֆլիսցու հայի վերաբերութեամբ : Նրան կարելի է փոքր ի շատեւ սթափեցնել իր խոր քննից միմիայն կենդանի խօսքով, քարոզներով, թատրոնով, կամ հրապարակական դասախօսութեամբ . . . Իսկ լրագրով, տպած խօսքով աղբել ուղենալ նրա վրա խնդրութիւն է : Գոնէ եթէ լրագիրը ծաղրական մի թերթ լինէր, մի պատկերազարդ, կարկատուներով մի լրագիր, — այն ժամանակ դեռ յոյս կարելի էր ունենալ որ այդ տեսակ լրագիր կառնիլի, կը կարգադրի . . .

Թիֆլիսցի հային անմատչելի է մի խոր, ծանր, մշակած միտք, նրան մի բան հասկացնելու համար հարկաւոր է դարդակ խօսք, մի աջող պարբերութիւն, մի յարմար սրամտութիւն . . . Այդ բաւական է նրա համար : Աւելին ծանրաբեռնում է նրա աղքատ ուղեղը, անմարտիկ է դառնում նրա մաշված խելքի համար . . .

Մէկի վրա ուղում ես դատողութիւն անել, այնպէս որ ուղեղով չբաւոր թիֆլիսցին քեզ հասկանայ, երկար ու բարակ դատողութեան տեղ, որ բոլորովին ապարդիւն է, բնական է եթէ ասեմ : «այդ էր պակաս . . . »

Միւսի պակասութիւնը ուղում ես ցոյց տալ, պէտք է ասեմ : «Ինչ պոռոզէ . . . » և այլն . . .

«Այդ էր պակաս» զլաւ պրծանք, «Ինչ պոռոզէ», «մախլաս», (նէ ինչ) «վունց կուլի քու բանը», «իշիդուլ», «օխտը հաց ուտող», «իշի լոխտա», «բաղնիս գնա», «Ինչ որդի է» և այլն : և այլն, — ահա թիֆլիսցու ամբողջ խելքի ոյծը, ահա ամբողջ նրա դատողութեան կարողութիւնը, մարդկիներին դնահատելու նրա ամբողջ ընդունակութիւնը, ահա ամբողջ նրա գիտութիւնը . . .

Յետագայ մահադ ոյծը ստացանք երէկ ի Ռթաւիոյ, որ խիստ մեծ թախծութիւն պատճառեց մեր սրտին : այն է մեծ Պ. Մանուկ Որդանանեանի մահը : Հանգուցեալն, որոյ կենսագրութիւնն ըրած է իւր և մեր պատուարժան և մշտեթիմ բարեկամը, այն անզուգական աղբայիններէն մին էր, որ թէ բարեպաշտութեամբ և թէ ազգասիրութեամբ Արշալուսոյ հոգեւոր խմբագրին հետ հոգեպէս ծանօթացած էր և փոխադարձաբար կը վայելէին միմեանց սէրն ու ճշմարիտ բարեկամութիւնն : Նա դ լիւսաւոր նեցուկն էր ի Հնդկիս և քաջալերիլ խմբագրութեան : և չղրացաւ շարունակել նոյն խնամքն ու համակրութիւնն և յետ վախճանի հանգուցելոյն : Աւելորդ կը համարիմք մեք կողմանէ գովեստներ հիւսել նորա կենացը մասին, կը լծողում որ իւր ծանօթ բարեկամը խօսի այստեղ, մեք աղօթեմք նորա հոգեւոյն համար հանգիստ և ընդ երանելեաց դասակցութիւն :

Մ Ա. Հ Ա. Գ Ո Յ Ժ



Ցաւալի սրտիւ և խորին դժուցմամբ ահա դուժեմ պատուարժան խմբագրիդ, Արշալուսոյ Արաբեան լրագրոյ զմահ բաղձարդ իւն և բաղձամեայ գործակալին ձերոյ պարոն Մանուկ Որդանանեան անզուգական հայրենասիրի առն, որ և զտեղի

կարճաւ ի 24երորդում փետրուար ամսոյ, զկնի կարճատե հիւանդութեան, ի հասակի 79 ամանց: Համբաւեցելոյ յուղարկաւորութեան ամսուր հանդէսն փառաւորապէս կատարեցաւ ի հեռեւեալ աւուր ուղեկցութեամբ փոքրամասն համազգի հասարակութեան քաղաքիս:

Բարեկիշատակ հանգուցեալն ծնունդ էր Նորն Զուգայու, և սերեալ թէ և յաղքատ ծնողաց, այլ յաղնիւ և պատուաւոր հին դերգաստանէ փարսադանեանց: Ի հասակի ութ և տասն ամաց ի տիս քնքուշ պատանեկութեան ելանէ ք հայրենեաց ի պանդխտութիւն ի կողմանս Զաւայ, ուր երջանկայիշատակ հանգուցեալ աղա Գեորգ Մանուկ Մանիշարեանց մեծանուն վաճառականն ընդունի զնա ի ներքոյ իւրոյ խնամակալութեան և կրթէ զնա ի տուր և առս: Զկնի հինգ ամաց հմտացեալ նորա պէսպէս պարագայից վաճառաշահութեան, խնդրանք թողնուութիւն աղերսէ ի բազմերախտ խնամակալութեան իւրմէ զբաղել յառանձին տուրեւառս, որ և շնորհի նմին: Ուստի ի 1824ին ելանէ ի Սուրբ Բայիս քաղաք, ուրանոր զկնի յովոյից բազմափնտ ամաց իւրովք քրտահոս արգելք վաստակօք ի ձեռն բերէ ճոխութիւնս անբաւս, զնէ ի 1835ին ք սեղական կառավարութենէ զգործատուն քաջարանոյի միոյ, որ առ ամբ բերէր նմա երբեմն չուտ շահ յիսուն հազար գլխիւ: Բայց յայսմ ժամանակի յանկարծուտ հիւանդացեալ նորա, պարտաւոր ի 1841ին խորհրդեալ ներհուն բժշկաց ելանել յուղեորութիւն յերոպէ: Անտանօր չըջապեալ նորա հանդիպի նախ տեսութեան բազմերախտ Հարց Միխիլ արեան ուխտի ի վեհետիկ: Գուցանէ անտանօր զեւանդ և զիղձ ուսումնասիրութեան և կրթի ի նոցանէ ըստ չափու քնդունակութե ի հայկականին... և ապա ուղեւորեալ յայլեւայլ հուշակաւոր քաղաքս Եւրոպա, վերադառնայ ի Զաւայ զկնի տասն ամաց բացակայութեան, և ժամանակ ինչ մնացեալ ի Սուրբ Բայիս, դայ և կալու զքնակութիւն իւր ի Բաթալիս, մնաց անգուգական, և ի հասակի արեւելք ծերութեան ընտրեալ զսակաւայէտ անպաճոյճ կեանս անանձնեայ պարագեալ աղովից, ուսմանց, և Աստուծոյ հաճոյ քնացից, և ապա ի ցոյց ջերմեանդէն իւրոյ հայրենասիրութեան բարեհաճի անմահ արգելքութեամբ հանտանեղ ք հայրենիս իւր ի Նորն Զուգա գուսումնարան քի վասն կրթութեան հայ երիտասարդութեան տեղոյն:

Բարեխախտ հոգով զգացեալ հանգուցեւելոյ յընթացս ուղեւորութեան իւրում յերոպէ թէ մի ի դիւսաւոր պատճառաց յառաջագիմութեանց և բարգաւաճութեանց անցնց յանպարիզի ուսումնասիրութեան և քաղաքակրթութեան համարի գիշանչուտ տպարանէ, ծախեաց զ24 հազար գլխիւ և գնեաց զնա մի տպարանի և առաքեաց ի Զուգա յմանակիւն քանի, ուրանօր թէ և երկար միջոց ապարդիւն մնաց այն և անգործ, բայց սիրելի է ինչ խոստովանել զի յանցելում ամի անմահ անալի հանգուցեալն ըստ ընթացի յայտնելոյ ի բազում դէպքս, արժանացաւ ականատես գոլառաջին խայրեաց և արգասեաց իւրոյ տպարանին հրատարակութեան քանի մի գալորական մատենից ի պէտս անականաց աղղի:

Այս աստանօր զհայրենասիրութեան ներքին մարթիւմ յայտ առնել զառաւելութիւն, այլ զնա նորին ոչ բնաւ:

Գլխաւոր առարկայ խօսակցութեան նորին և տաճուն գաղափար էր նորա միշտ իղձ տեսանելոյ զյառաջագիմութիւն աղգային ուսումնարանաց, բարգաւաճութիւն կրօնի և աղգութեան, հայրենասիրական բարեմիտ յորդորք, և առաքելական վարուց նախանձախնդրութիւն: Երջանկայիշատակ հանգուցեալ այրն առաքելաբար իւրովք բարեպաշտական և հայրենասիրական աղղի աղգի բարեմասնութեանց պերճ հանդիսիւք անմահացոյց զիւր անուն ի սիրտս և ի դոհ շրթունս ամենից, մանաւանդ նոցին զորոց զկենացն մատակարարեաց զպարէնութե և չեղն նորա լալական դերդաստանք ի ժամ մահուան, բայց առաջ, բազումք եղիցին

այրիք և որք որք զգերարտօսը իղնեցուցն յաջաց ընդ լուր անդառնալի մահուան նորա: Այս թափուր և զուրկ մնացեն ի մխիթարական տարեւոր նպաստից:

Կրօնասիրութիւնն ի սփիւռս Հեղինատանի, որպէս և կարէ վկայել գեր. Գրիգորիս եպիսկոպոսն, սա միայն էր մնացեալ ի հինաւորաց արանց բարեպաշտից, որ յօժարակամ և որտի մտօք յարգէր և պատուէր զծէսս և զկենսոյն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Սիրելի էր նմին միշտ հանդիսակից գոլաշտամանց սուրբ եկեղեցւոյն, բայց ծերութիւն նորին խոչ և խուժ լինէին յաճախ, որով և պարտաւերէր երկիցս յամսոյ արժանանալ տեսութեան ներգազան խորհրդոյն տրոյ Պատարագին, և այն թէ քանի բարեպաշտական հոգեով երկիւղածութիւն յանհարկցն է ինչ ի դան բերել:

Այս մնաց ինչ միայն ի նկատի անունք զի հանգուցեալն ի հանգ հան ըստ կարեաց իւրոց զպարտութիւն յաշխարհի աստ, թէ արգեամբք, թէ քանիւք, և թէ գործովք: Բարեբայց զնա արշարհ դառն արկածեօք իւրովք, այլ համբարտար հոգեով տարաւ ամենայնի, և անտուտուն, և դոհ և բաւարար կնքեաց զմահական կեանս իւր, միայն ք տրիտուր դովանք վաստակոյն և զընկերն քան զանձն առաւել սիրելով, անթաւամ պսակաց յաւիտեականին եղև ակնկալու, և շնորհաց այնմ անպառապէսիաղ գանձուց աղբերն, որ դէտեսին կալեալ ակնատես եղև նորին անգալարական, հայրենասիրական, բարեպաշտական և աղգի աղգի պերճ բարեմասնութեանց հանդիսից: Թող ուրեմն յիշատակ հանգուցեղոյ անուն անմահականի մնացէ և անշնչելի ի սիրտ մերոց համազգեաց:

Գ. Գ. ԳԱՄՊԱՐԵԱՆ

Ե ՈՒ Ե Կ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՈՏԻՃ

Դառաջին ամս գահակալութեան Պիտի թ. Հոովմայ հայրապետի, փանին Լալէր անուն կին մի պարսեւոր կաքաւեայ ի Հոովմա արաջի հանդիսականաց, որ վասն անանցաւ նա գովութիւնս եռանդալինս ի մարդկանէ: Ոմանք ի սոցանէ որոշեցին ի միջի իւրեանց նուիրել նմա ինչ ի յիշատակ, և ընտրեցին առ այս դափնեայ պսակ ոսկեղէն որ արժէր փրանկս 12,000, և հարկ էր հանգանակել զայս գումար ի միջոցի 48 Ժամուց: Ինքեւ պատրաստեցաւ պսակն և հանդերձեալք նուիրել, ծագեաց ի միտս նոցա կասկածանս թէ մի գուցէ գժուարացի ընդայն Պապն ուստի չոգան խնդրել զհաճութիւն կամաց նորին, առարկելով նմա եթէ փանին Լալէր բարեպաշտութիւն ոմն էր և բարեբայց: Առ որ պատասխանի ետ Պապն ըստ ինչ յայտնեցից ձեզ զգալանցն իմոց և ոչ զհաճութիւն իմտաց: Այլ ոչ ընդ դիմացայց և առաջարկութեանք, սակայն թափ ինչ եթէ ոչ է բարեք ընտրութիւն ընծայիլ: Իբր լոկ եկեղեցական այս են կարծիք իմ: պսակն յարմարեւ արխատութեանց զլսոյն, այլ ոչ ոտից: Այսմ ամենայնի ոչ միտ եղեալ քանից Պապին ընծայեցաւ պսակն փանին պարսեւորին: և ըստ ընտրութիւն լուեալ էր զպատասխանի Պապին, վաճառեաց զպսակն ոսկեղէն և զգլխոս նորա ընծայեաց աղքատաց քանիքին: Յետ դոյզն Ժամանակի պատահեաց Պապին մի ոմն ի պատգամաւորաց անտի, ան հիտաց ընդին մեծաւ խոհմութեամբ վարեցաւ: արդալեւ իսկ նա առաւել իմաստութիւն եցոյց յոտ իւր, քան դուք ի դուրսս ձերս:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կայսերական հրամանագրի և քաղաքիս երեւելոց և վաճառականաց դուռնարման մէջ եւրոպայի համեմատ ծանուցուեցաւ հասարակութեան, թէ Մարտ 1—13էն սկսեալ հրաման տրուած է խտրելի ժողովոյն որ բոլոր տրոյ վճարուեց հինգնոցով և վեցով լինին:

Քաղաքիս մէջ ոչ միայն յիշեալ տուրքն, այլ և բոլոր ուրիշ տրեւ արքունական տուրք հնչուն:

Դրամով սկսան վճարուիլ թէպէտ Եմաքի տուրքին համար 1/3 մասը քայմէ առնելու խոսք կար, 1 լիւրնի փոխարէն 400 դահեկան թուղթ վճարելով, սակայն հետեւեալ օրը հեռագիր և կաւ թէ այն ալ չընդունուի:

Անցեալ տարած հասին ի նաւահանդիսան մեր վեհ. Գալիպ փաշա, Հալէպի նոր վարին, որու հետ եին նաեւ վեհ. Մաղհար փաշա և մեծ. Նուրեան էֆ. վերջին երկու անձինքը կայսերական հրամանագրով լիւրջօր քովէր անաւանս են Հալէպի, հեռագրեցին և Գոլանի դաւանաւոր մէջ բարենորոգութիւններ հաստատելոյ:

Քաղաքիս կացութիւնը դարձեալ աւելցաւ, և սուղուեցաւ ինչ որ արած էինք մէջ վերջին թուոյն մէջ, բարձր վայել փաշային գաղերու և շարագործաց նկատմամբ ձեռք առած միջոցներուն համար թէ, ասոնց անհոգութիւնը մի քանի օր է միայն: Եւ այնպէս ալ եղաւ: հիմակ քան զառաջինը լրացած են յափշտակողք: Անցեալ օր 4—5 դոլերը դէն ի ձեռին, բնտ ոմանց եւրոպական նաւատէր հագուստ հագած, հաճի Սթամբուլ կոչուած թաղը շատ խառնութիւններ մտնելով, անանց մէկուն վրաս հասցընելոյ դրամի գործոցները բանալ տալով, բայց պարտութեամբները չգտնելով դուրս ելան: Այնպիսեանք խառնութ մտնելով մի քանի կտոր գոհարեղէններ հանել տուին, յետոյ խառնութ պանիւր անոնց շարժմանքէն կռահելով որ դասակարգի պատկանող մարդիկ լինելուն, անմիջապէս ժողովեց դահարները և զկրեւք ճամբեց: Ասկիւ թերեւս փորձ մի է, և իրագործութիւնը ուրիշ անգամի թողուցած է:

Անցեալ կիւրակէ Ս. Յովհաննէս եկեղեցին մտան գեղերը և հարկեր փրանքի չափ իրեղէն: Եւր վերցուցին:

Նշանաւոր դոլ մի երկու շաբթի օրը ձեռք ձգեց անտիկանութիւնը, այն է Զիրիզութաքին, որ բնտ ոմանց տան մի մէջ քնացած ժամանակ բռնուեցաւ: Կրտսի թէ քնք ընկերն ևս Գուլուստաքին մէկտեղ բռնուած է, և երկուք միասին բանտերկելոց ցանկին մէջ արձանագրուեցան: Դժբաղդութիւն կըլինէր Զմուռնացեոց եթէ լսէին որ յիշեալ երկու արիւնկակ զոլերը մահուան դպրութեան ջնջուած են, իրենց ազատութիւնը գնելով:

Քաղաքին բարձրագատիւ վայրն ի նոյստ քայմէն ջնջման իւր 2 ամսականները թողուց, որոյ նայելով 2 աւուր մէջ 600,000 չափ գումար ստորագրեւեցան պաշտան գործակալք:

Մարտի ք կրկին երեւցան, և մեծ վրաս կըսպառնան:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Այնքան վերջին շաբթուս ծախքը թէ և անշան սակայն գլխերն գրեթէ նոյն են: Ընդամենը ներկայ շաբթուս մէջ վաճառեցան 42 կողով միայն, և երբ 128 դահեկանի: Պատրաստի կան 2240 կողով:

ԾԱՆՈԹՈՒՄ

Աղգային հիւանդանոցի փողոցը տիկին եղիստիէթ Բաբէլեանի թիւ 9 տունը ծախու է: Առնել ուղղիլ կինայ Պ. Բաբէլի հետ անսնուի:

ՊԻՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Թիշեալ դասագիրքը երկրորդ անգամ տպուած է Ս. Երեմեայի տպարանին մէջ, որոյ մէջ կը գտնուի նաեւ Աւետեայ երկրին աշխարհագրական վիմագիր տախտակը:

Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ դիմաց Հայոց դեղաբանի դեղագործ Պ. Ժ. Բ. Վայեի կըծանոցուեց Հայ հասարակութեան որ տղայից պատուատուր ճամար ետ ուրաքմ պատուատու (աղբ) ունի բովը, ուղղուց կըծայ դիմել յիշեալ դեղաբանը: Աղբատ բնութեաց ճամար ձրի է:

ՏԵՂ ԼՐԱԳՐՈՅՈՒՄ

Ղ. Կ. Գ. Պալատիկ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԵԼՈՅՍ ԱՐԱՐՈՏԵԱՆ